

ԱՐԾԱԿ ՄԱԴՈՅԱՆ
Քանասիրական գիլտությունների դոկտոր

ԼԻՆԵԼՈՒԹ-ՅԱՆ ճԱՆԱՊԱՐՀԻՆ

Տառ Մէսրոպիան եւ ուսումն դասն կեանս հայուն հասպարուն:

ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՑՆ ՇԱՅՈՅ

1866 թ. սեպտեմբերի 17-ին Էջմիածնում գումարված համազգային ժողովը միաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Գեորգ արքեպիսկոպոս Քերեստեճամին, որ հայտնի էր արևմտահայ իրականության մեջ ծավալած ազգօքտն մեծ գործունեությամբ: Նրա ուշադրությունից երբեք չի Վրիպել ոչինչ, որ կապված էր ազգային կյանքի կազմակերպության հետ: Երջանկաթիշտառ Հայրապետը, սակայն, առանձնահատուկ վերաբերմունք է դրսւորել մշակույթի և մասնավորապես ուսումնական բնագավառուների նկատմամբ: Գեորգ Դ. Կաթողիկոսի համոզմունքն էր, որ ոչ միայն Եկեղեցու, այլև ընդհանրապես ազգի ապագան կերտողը դպրոցն է, ուստի պիտի լինի ուշադրության կենտրոնում: Հատկանշ-շական է, որ Նոր Նախիջևանի Նիստութա զույհի պատվիրակները Կաթողիկոսին տեղեկացնում են իրենց զյուղում նոր Եկեղեցու հիմնադրման մասին, և Վեհափառ հետաքրքրությունը՝ իսկ դպրոց ունե՞ն: Ստանալով բացասական պատասխան՝ նա խորհրդուր է տալիս նախ դպրոց բանալ, նոր միայն շարունակել Եկեղեցու շինարարությունը¹:

Գամ բարձրանալուց տասը տարի անց, 27 հոկտեմբեր 1876 թվակիր կոնհակով Վեհափառ Աղեքսանդր Մանթաշյանին խոստվանում էր, թե ինքը բարձր և պատասխանատու պաշտոնն ստանձնելու պահից հոգ է տարել «քարենկարգութեան դպրոցաց և յամենայն տեղիս, յոր ցրուեալ են հայազնեայ որդիք մեր», հորդորել է «յաճախել զիմու դպրոցաց՝ իբրև կարևորագոյն տեղեաց և հաստատութեանց, յորոց հմար է ակն ունել այժմ և առ յապայն զնշմարիս յառաջադիմութիւն ազգիս ի ծանօթութիւն ազգային պարտուց իրեանց և յանձնար պահանութիւն լեզուի և կրօնի Հայաստանեայց» (Էջ 712):

Ժամանելով Սայր Ալեքսո՝ նա խորապես ուսումնասիրում է իրադրությունը բոլոր բնագավառներում, ինչպես սպասելի էր՝ առաջանիերթություն համարելով դպրոցական ասպարեզը: Իսկ ժամանակը դժվարին էր, կարիքն ու պակասությունը բոլոր բնագավառներում ակնառու էին. բնական-տարերային աղետներ, զայթականություն, սով... Բայց նա անվկան դիմագրավում է բոլոր դժվարություններին, հետամսուս լինելով նախ արյունավետ կրթական համակարգի ստեղծմանը: Վեհափառն անբավարար է ներկայանում Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը, մտահոգում է վերջինիս բարենկարգության խնդիրը:

¹ Տես «Վաերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան. Գևորգ Դ», Կազմաց Ս. Թեհրույյան, Երևան, 2004, լ. 40. այսուհետև սույն գրքի հղումները՝ շարադրանքի մեջ, փակազերով:

1867 թ. հունիսի 2-ին Կոստանդնուպոլսու Պատրիարքին հղած նամակում գրում է. «...կամիմք բանալ ի կողման յայսոսիկ ուսումնարան հոգևորական, և կերպարանափոխ առնել զուպարանն... նոյնպէս և զժառանգաւորացն վարժարան սրբոյ Սթոռոյս դնել ի պատշաճաւոր կարգի» (110)...

Ծուրչ չորս տարի անց ճեմարանի շենքի հյուսիսային ճակատին Հայոց Հայրապետն արձանագրելու էր. «Ողորմութեամբ Աստուծոյ ազգաւոր Կաթողիկոսն Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Դ.Կ.Պոլսեցի լոգմաջան աշխատութեամբ կառոյց զայս ճեմարան վասն ժառանգաւորաց Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի արդեամբք վիճակին Աստրախանայ եւ օժանդակութեամբ Հայոց բնակելոց ի սահման Ռուսաստանեաց յամի Փրկչի 1871, Հայոց Ութի»: Այս հակիրճ խոսքի նույնում աներևսակայելի ծավալի ամենօրյա ջանադիր հոգածությունն է: Ինչպես շեշտված է «Արարատ» ամսագրի՝ երշանկահիշատակ Կաթողիկոսի մահախոսականում, Մեծագործ Հայրապետի «Ճեռնարկած բարի գործոց մէջ ամենից ազգօգուտն ու բարենպատակը այս ճեմարանն է, բայց պէտք է ասել, որ Հանգուցեալը սրբակը քրքրագրութեան և իննամեայ գոյութեան համար զոհեց ամենայն ինչ» (էջ 963): Դրա նշանակությունը դժվար է գերազանահատել, և ժամանակակիցների պատկերացմամբ Կարուրագույն հանգամանքներից մնկը արձանագրված ենք գտնում ճեմարանի բացման համեստին կարդացված ներբողի մնչ.

...Զի եթէ ի հնումն դեզերէին յար
ՑԱ,թէնս, Բիլանդիոն, յԱղեքանդրիա,
Հայ մամկտին այսօր ի հայրենիս զայ: (532)

Առաջին իսկ հնարավորությունն օգտագործելով՝ նա որոշում է դպրոցական շենք կառուցել, առձեռն ունենալով Աստրախանի Սերովք եպիսկոպոս Արարատյանի դրամագրությունը, Ամստերդամի հայոց լճալ Եկեղեցու և Զմյունիայի կալվածների վաճառքի հասույթը, կալկաթայից Գեորգ Մանուկյանի, Մոսկվայից, Կարինից, Տփիլիսից ստացած գումարները², որ, սակայն, բավարար չէին ավարտին հասցնելու շինարարությունը: Իր նախաձեռնությանն ամենօրյա համազգային հոգածություն էր ամրաժեշտ: Հետևաբար պետք էր դիմումներ կատարել, և՝ ոչ միայն ազգայիններին:

Առաջին հոգած շինափայտի հայթայթումն էր: Կաթողիկոսը դիմում է Թուրքիայի արտաքին գործոց նախարարության պաշտոնյա Ֆուատ փաշային (28 հունիս 1867), և շուտով (առաջնամբերի 7-ին) ստացվում է դրական պատասխան, և անվճար ստանում են ակնկալած 1000 կադմի գերանը, տարեկերչին (30 դեկտ.) նա հայտնում է իր շնորհակալությունը: Այնուինեւ իր ներդին ուսական կառավարությունը թույլ է տալիս անտառանյութը ներկրել առանց մաքսատորքի: Առաջ անցնելով հիշենք, որ հետագայում ևս Կաթողիկոսը դիմել է կառավարությանը համանման հարցերով: Մասնավորաբար 1870 թ. օգոստոսի 19-ի գրությամբ խնդրում էր թույլատրել առանց մաքսավճարի ստանալ 19 արկդ թույլը (էջ 344):

² Մադարիա արքեպոս. Օրմաննան, Ազգապարում, հագ. Գ, Պայրութ, 1961, լ. 4240:

1868 թ. ապրիլին Գեղրգ Ռ-ը համայն հայ ժողովրդին հորդորում էր ամեն կերպ աջակցել մեծ ծախսեր պահանջող հայրենանվեր գործին, որովհետև չէ հնար ի զոյիս համեն առանց ձեռնուտութեան բարեպաշտութեանց ձերոց, ուստի այսու մերով Հայրապետական կոնդակաւ և Աստուածային սուրբ օրինութեամբ պարտ անձին համարեցաք հրահիղել զարդելիս մեր ի գործ հանգանակութեան կամաւոր և առատ տրովք և ողորմութեամբ ձեռով:

1869 թ. հունիսի 8-ին նոր կոնդակով դիմում է Հայ Եկեղեցու՝ աշխարհասիյու բոլոր թեմերին. «...ի 26 ամսոյ սկիզբն կալաք հիմն արկանել նոր ի նորոյ շինութիւն ուսումնարանի Մայր Աթոռոյս - վայելու և կանոնաւոր ձևօք... յորդորեամբ զարդելութիւն ձեր կրկնապատկել և զաշխատութիւնս ձեր, զի ըստ յորդորական կոնդակի մերում հաւաքելով ի փոյթ զկամաւոր նույն բարեպաշտ ժողովրդոց մերոց աճապարիցէք հասուցանել ի Մայր Աթոռու առ մեզ»:

Ընդումելով Մակար արքեպիսկոպոս Մամիկոնյանի՝ Ամանորի շնորհավորանքները՝ Գեղրգ Ռ-ը նաև գործնական հանձնարարություններ է անում, ի շարս որոց խորհուրդ է տալիս փոխառության տոմսերի «գտուկոսին միայն զոր յատկացուցեալ եմք եկամուտ ուսումնարանի Մայր Աթոռոյ, տնօրինել զարժան... որպէս զի ամ ըստ ամէ տոկոսին եկեցեն յէջմիածին յանուն ճեմարանի»³:

Ս. Եջմիածնում հոգևոր ուսումնական հաստատություն հիմնելու այս հախաձեռնությունը համընդհանուր խանդավառությամբ ընդունվեց ամենուրեք, որովհետև կոչված էր իրականացնելու ազգի դարավոր երազանքը: Եվ չուշացան բարերարներն ու Ավիրատումները: Օժանդակությունն իրականացվում էր ամենատարբեր եղանակներով: Թերևս առաջին արձագանքը Վրաստանի և Խմերեթի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսինն էր, որ հունիսի 22-ին պատվիրում է Թիֆլիսի բոլոր եկեղեցներին, որպեսզի հայտարարնեն «ի լուր ժողովրդեան զակընաւորութենէ այս կարևոր և օգտակար գործոց, յորդորելով զնուցին Բարեպաշտութիւնս յառատասուր նույրաբերութիւն յօժանդակութիւն մեծածախ շինութեան» (Էջ 310): Սրան հաջորդում են՝ Թիֆլիսից՝ Սարգիս արքեպիսկոպոսի, Արցախից՝ Հովհանն վարդապետ Տեր-Գրիգորյանցի հայտարարությունները: Արձագանքում են առանց բացառության բոլոր հայախոծ զաղութենրից: բնականարար զիսավոր օգնությունը գալիս է մերձակա ոռասատանյան թեմերից: 1869 թ. մայիսի 25-ին սկսված շինարարությունն ավարտվեց 1874-ին, և բացման արարողությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 28-ին՝ Սուրբ Գեղրգի տոնին:

«Մերու Հայաստանի» լրագիրը 1874 թ. օգոստոսի 24-ի համարում (33) զետեղում է հաստուկ հոդված, որով իր մերժին հորդորում է օժանդակել Մայր Աթոռի և ճեմարանի կարիքներին: Նրա օրինակին հետևում են և այլ թերթեր՝ դրանով իսկ նպաստելով քարոզարշավին:

Անկասկած, Ավիրաբերություններ անում էին ուստավորներն ու այցելուները, բայց ամեն ինչ չէ, որ այսօր հնարավոր է վերականգնել: 1878 թ. Հայրապետին այցելում է Պարսից Նասրեդդին շահը և Ավիրաբերում 1000 ուլիք՝ 700-ը ճեմարանին, և 300-ը՝ աղ-

³ ՀՀ ԱԱ, ֆ. 57, գ. 2, պ. 17, թ. 33:

քատներին (52):

Թիֆլիսաբնակ Ազնվուրի Մելիք-Բեզզարյանն իր երկրարկանի տունը և 1000 ռ. արծաթ է նվիրաբերում «օգուտ և ի յախտենական սեփականութիւն նորակառոյց ուսումնարանին, որպէսզի տան արդեամբ» և դրամի տոկոսներով այնտեղ սովորեն «երիս մանկուն» (Էջ 356-357): 30.000 արժողությամբ իր անշարժ գույքն է նվիրաբերում քիչնեցի Կարապետ Թիլբեյանցը (Էջ 457-458):

Արտաշես Քարտաշյանցը և նրա տիկինը կատարելով իրենց հոր՝ Սարգիս Ցուզբաշյանի վերջին կամքը՝ 500 ռ. են նվիրում ճեմարանի շինարարությանը (1877 թ.): 1874 թ. հուլիսի 20-ին Արցախի թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Զալայյանը գրում էր Կաթողիկոսին. «Յայտ առնեմ խոնարհաբար, թէ զխոստացեալն մեօք զհազար որբինս արծ. ի Վիճակային արդեանց թեմին ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյ Սիրոյ Էջմիածնի արդեն ընդ յայտարարութեան յշն ամսոյս համար 63, մատուցեալ եմ փուտայի Զերում Սրբութեան, խոստանալով ամի ամի նպաստամատոյց գտանիլ յառաջադիմութեան ազգաշահ նպատակի Զերում գումարաւ» (Էջ 505): Նոյն ժամանակ Արցախի Վիճակային կոնսիստորիան հայտնում էր, որ հոգացել է ճեմարան ուղարկվող չորս աշակերտների ճանապարհածախը (Էջ 511): Կզլարցի Ա. կարգի վաճառական մահտեսի Եսայի հզմիրյանցը պատրաստակամություն է հայտնում որդեգրելու մեկ ճեմարանականի (23 դեկտ. 1871):

1873 թ. նոր Նախիջևանից Գասպար Մարկոսյանը, ի հիշատակ իր ծնողների, փոխառության տոմսեր է նվիրում ճեմարանին, իսկ նրա համաքաղաքացի Խաչատոր Պախչիսարայովը՝ 1500 ռ. արծաթ (1876): Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունն առաքում է 300 ռ., Աղ. Խաճակյանցը՝ 50 ռ. (1877), Նատալիա Զարանցյանը ու որդիները 1000 ռ. են տրամադրում ճեմարանի ննջարանի շինարարությանը (1879) և այլն: Նվիրատվություններն սպասելիքները գերազանցեցին: Ակզենտներու մասնաւութեանը նախատեսված էր ունենալ 50 աշակերտ, բայց ճեմարանի բացումից մեկ-երկու տարի անց (1876 թ.), ննջարանն ու սեղանատունը կառուցելիս նկատի ունեն 200 սան (27 նոյեմբերի 1876 թ. կոնդակը Մարթաշյանին):

Սակայն միայն հանգանակություններն ու համեստ նվիրատվությունները չեն, որ պիտի զլուս բերեին ճեմարանի կառուցումն ու գործարկումը: 1872 թ. դեկտեմբերի 5-ի կոնդակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմում էր «աստուածակը և մեծահարուստ սիրելեաց ամենից հարազատ որդուց Մայր Աթոռոյ», որպեսզի «որք կարող իցեն ըստ իրաքանչիւր բաղձանաց և ձեռնիաստութեանց ընկալցին զմէն մի կամ առաւել որդեգիրս՝ հատուցանելով զտարեկան ծախս նոցա, որոց յամենայն կողմանց աշխարհի, ուր Հայք իցեն, և իրաքանչիւրոցն ծախը տարեկան սահմանեալ են երեք հարիւր որբիի, որպէս զի նուիրօք և նպաստիք բարեկաշտ Ազգայնոց բանալ զճեմարանն, որոյ բարոյական արդեամբ մարթացուր սրբել զարտօսր աչաց որդուց Հայաստանեալց» (Էջ 439):

Եվ, իսկապես, համազգային այս մեծ գործին առավել ջշանակալից եղավ հայ մեծահարուստների ներդրումը: Առաջիններից մեկը և թերևս ամենաառատաձեռնը Հովհաննես Հովհաննան էր, որ նախանձախնդիր էր լուսավորության հարցում և բազմիցս աշակից ու նախաձեռնող է եղել դպրոցաշինության, ուսման գործը կազմակերպելու, կանոնավորելու

համար: 1874 թ. հոկտեմբերի 15-ին նա գրում էր Հայրապետին. «...կամ եղն ինձ ի հայաստին խորին յարգանաց իմոց առ ամենայն ձեռնարկս Վեհիդ և իրքն նպաստ դուզնաքեայ առ անվար իրազործութիւն ազգաշահ նպատակաց ձերոց նուիրել նախ՝ րուալիս արծաթեայ երեք հազար ճեմարանի՝ սակա կրթելոյ ի նախ տոկոսոք այնք գումարին զորդեցիր մի, երկրորդ՝ տալ երկու հազար րուալիս ի վերանորոգութիւն սրբոյ Տաճարին էջմիածնի, որում կարօտի մեծապէս և երրորդ՝ զտուեալն ինն փոխարինարար գիմնազ հազար վեց հարիւր յիսուն և չորս րուալիս և վայսուն ութն կոպէկս ի գին եռատեսակ թղթոց, միոյ փոքրադիր արագատիպի և տպարանական մամլոյ բաշխել յօգուտ տպարանին և յարդիւնաւոր յառաջադիմութիւն նորին»:

Մեծահարուստների օժանդակությունը միայն դրամով չէր արտահայտվում: Նույն թվականին է վերաբերում Մ'կրտիչ Սամասարյանի նվերը ճեմարանին: Նա Եվրոպայից ստանում և ճեմարանին է ուղարկում բնագիտական առարկաներ՝ դասավանդման ժամանակ օգտագործելու համար: Այս կարգի նվիրատվությունները շարունակվում են նաև հետագա տարիներին:

1879 թ. սեպտեմբերի 22-ի հաշվետվության մեջ Խորեն Վարդապետ Ստեփանեն հայտնում էր. «Ի Նախիջևանայ գնացի ի Մոսկովա, որ հայազն ժողովուոր ամենայն պատրաստութեամբ մատոյց զիւր նուէրս յօգուտ Գէորգեան ճեմարանի և պարագուիս նորին եղն Մեծ. Պ. Թովհաննէս Յովնանեան, որ նուիրեց զ1500 մ [անելթ]: Հասարակութիւնն Մոսկայի նուիրեց զ3000 մ: Ի Մոսկովայի անդ առանձին ինն գործունակութեամբ ցամկալի է ինձ յիշել առաջի Վեհափառութեան Ձեր գհայրենասէր և գհայրապետաէր Պ. Թովհաննէս Յովնանեան...» (Էջ 866):

Դրամահավաքին ամեն կարպ աջակցող մեծահարուստներից հիշենք Մ'կրտիչ Սամասարյանին, Աղեքսանդր Մ'անթաշյանին, Հովհաննես Զիթախցյանին, Մելքոն Լոմինենին, թժ. Հարություն Հովհաննիսյանին: Գնահատանքի խոսքերով դիմելով նրանց՝ Վեհափառ Հայրապետը 1879 թ. սեպտեմբերի 28-ին գրում էր. «Դուք յօրէ ձեռնարկութեան մերոյ որպէս յարդիւնաւորութիւն տպարանի՝ նոյնական եւ հաստատութիւն ճեմարանին եւ ի բարեկարգութիւն հանելոյ զՄայր Աթոռու՝ ոչ կասեցալը երբեք յանձնայն դէպս օժանդակ լինել մեզ» (Էջ 870): Նույնական գնահատականի է արժանանում թիֆլիսահայ Աղեքսանդր Թայիրյանցը Կաթողիկոսի 1875 թ. մայիսի 8-ի կոնդակով:

Ինչպես հայտնի է, նոր-նոր շահագործման հանձնված՝ այրվում է ճեմարանի շենքի արևմտյան թևը՝ հանդիսարանը, խոհանոցը: Դա 1874 թ. հոկտեմբերի 16-ն էր:

Կաթողիկոս ատիպակած էր դարձյալ դիմելու հայ հասարակության օգնությանը: Աշխարհի բոլոր ծագերից եղան արձագանքողներ, կամավոր նվիրատվություններ էին ստացվում ամընհիմատ, այդ թվում Ռուսաստանի ներքին գործոց նախարարությունից: Այստեղ ևս առաջիններից մեկը Հովհ. Հովնանյանն էր: 1875 թ. հունվարի 20-ին նա առաջարկում է իր ծառայությունը՝ շրջան-հրշեց մեքենաներ տրամադրել Մայր Աթոռին: Վեհափառ Հայրապետի հճանամոռաց, անձանձիր աշխատանքը չվրիպեց ժամանակակիցների հայացքից: Մակար արքափակուպուը 1875 թ. փետրվարի 19-ի նամակում գործ էր. «...զեռանդում շանացողութիւն և զմշտնջենական նոգածութիւն Վեհիդ Մեծի, զոր տեսի աչօք իմովք, գուն գործէք զցայգ և զցերեկ հնարաւոր միջոցօք ապահովել զհաստատում եղանակ կա-

ուավարութեան ճեմարանի սրբոյ Ալեռոյն» (586):

1872 թ. դեկտեմբերի 5-ի կոնդակով, որից քաղումներ արվեցին վերևում, Գեորգ Դ-ը հայտնում էր, թե միանվագ բավական մեծ զումար նվիրաբերողների անունները «արձանագրեսցին ի թիւս մշտնչենաւոր բարերարաց ճեմարանին և յաւէտ հրատարակեսցին ի վերջ իրաքանչիր մատենից ի լոյս եկեղոց ի տպարանն Մայր Աթոռոյս սկսեալ յօրէ բացման ճեմարանի»: Կարծում ենք՝ Մայր Աթոռոյ հրատարակություններից (այդ թվում և պարերականներից) կարելի կլինի քաղել ամերաժեշտ շատ տեղեկություններ: Բայց դա հավանաբար չի կարող սպառիչ պատկերացում տալ մեզ հետաքրքրող երևույթի մասին, քանի որ անցած 130 տարիներին բազմապատկվել են տարրեր կարգի նվիրատվությունները և հասել հազարների: Եվ թե հիշյալ սկզբունքը միշտ չէ, որ հնարավոր կլինի պահպանել: Թերևս առավել գործնական կլինի ճեմարանում Ուկեմատյան պահել և ժամանակագրական հերթականությամբ գրառել նվիրատվությունները՝ բարերարների վերաբերյալ տեղեկություններով: Ժամանակ անց դա կլինի կենսագրական յուրօրինակ բառարան, ուր համառոտ գծերով կներկայացվեն նվիրատունների կենսագրությունները, հակիրճ բնութագրերը, լուսանկարները

Սույն անդրադարձն անհամենաստ համեստ նպատակ էր հետապնդում. համառոտ մերկայացնել ճեմարանի գոյության առաջին տարիներին ժողովրդի և մեծահարուստների ցուցաբերած ուշադրությունը: «Վաերագրեր Հայ եկեղեցու պատմութեան» մատենաշարի 11 հատորներից կարելի է քաղել շատ հետաքրքրական տեղեկություններ նաև հետազաշրջանի վերաբերյալ: Ի դարձու ևս հայ ժողովրդը, հոգևորականները, մտավորականությունը մշտապես ուշադիր են եղել դպրոցական գործի և մասնավորաբար ճեմարանի նկատմամբ:

Ճեմարանն ամբողջ հայ հասարակության համար նվիրական մի ձեռնարկում էր և մնաց այդպիսին տասնմայսակներ շարունակ: Նոյնինիկ խորհրդային առաջին տարիներին, երբ դադարեցվել էր համազգային այդ հաստատության գործունեությունը, այս ու այն վայրից ստացվում էին օգտակար լինելու պատրաստակամության հավաստիացուներ, նվիրատվություններ: 1925 թ. հոկտեմբերի 12-ին Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը հայտնում էր, թե լամինգրադարնակ Ստուխամ Սերեբրակյանն իր անձնական գրադարանը նվիրում է Գևորգյան ճեմարանին: Մայր Աթոռում որոշում են այն «Կցել Հայրապետական մատենադարանին, մինչև որ կբացուի Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանը», և 1925 թ. հոկտեմբերի 12-ին նրան հայտնում էին, թե գրադարանը «կդառնայ [ճեմարանի] նոր կազմը-նելիք մատենադարանի հիմնական մասը՝ պահպանվելով նվիրատուի անունով»⁴:

⁴ ՀՀ ԱԱ, ֆ. 409, գ. 1, զ. 2303, թ. 9: